


Մաքրման ընդհանուր ցուցումներ խմբային միջավայրերում շնչառական հիվանդությունների դեպքում

Այս տեղեկատվությունը նախատեսված է այն մարդկանց համար, ովքեր զբաղվում են հանրային վայրերի, օրինակ՝ հյուրանոցների, եկեղեցիների և դպրոցների մաքրությամբ: Սա ՉԻ փոխարինում մաքրման և ախտահանման սովորական ընթացակարգերին, այլ տրամադրում է մաքրման հետ կապված լրացուցիչ տեղեկատվություն՝ շնչառական վարակների, օրինակ՝ կորոնավիրուս հիվանդություն-2019-ի (COVID-19) առաջացրած վարակի տարածումը կանխելու համար:




Աշխատակիցները պետք է օգտագործեն պաշտպանիչ հագուստ ու սարքավորումներ, ինչպես նկարագրված է իրենց աշխատանքային կանոնների և ընթացակարգերի մեջ: Ի լրումն սովորական մաքրման համար պահանջվող իրերի՝ հատուկ հանդերձանքի կամ սարքավորումների, օրինակ՝ դիմակների կամ արտահագուստի անհրաժեշտություն **չկա**:

Մաքրեք բոլոր իրերը, որոնց հաճախակի դիպչում եք:



Մաքրեք բոլոր այն մակերեսները, որոնց հաճախակի եք դիպչում, օրինակ՝ աշխատանքային սեղանները, սեղանների մակերեսները, դռների բռնակները, լույսի վարդակները, բաղնիքի հարմարանքները, զուգարանները, աղբարկղերը, հեռախոսները, հեռակառավարման վահանակները, ստեղնաշարերը, պլանշետներն ու կողային սեղանիկները: Օգտագործեք ճրջակա միջավայրի պաշտպանության գործակալության (ՇՄԳ) կողմից գրանցված արտադրանք, որը մաքրում (հեռացնում է մանրէները) և ախտահանում է (սպանում է մանրէները): Միշտ հետևեք մաքրող և ախտահանող միջոցների պիտակների ցուցումներին:

	<p>Կոշտ մակերեսներ՝</p> <ul style="list-style-type: none">• Մաքրեք և ախտահանեք կոշտ մակերեսներն ու առարկաները:• Կեղտոտ մակերեսները լվացեք սովորական կենցաղային մաքրման միջոցով՝ հեռացնելու կեղտը, մանրէները և յուղը: Պարզաջրեք ջրով, ապա օգտագործեք ՇՄԳ-ի կողմից գրանցված ախտահանիչ միջոց: Պահպանեք արտադրողի կողմից առաջարկվող խտությունը, կիրառման եղանակը և կոնտակտային ժամանակը:• Եթե չկա ՇՄԳ-ի կողմից գրանցված ախտահանիչ միջոց, օգտագործեք բլորի պարունակությամբ 2%-անոց սպիտակեցնող լուծույթ (4 բաժակ ջրին՝ մոտավորապես 1 ճաշի գդալ սպիտակեցնող լուծույթ): Սպիտակեցնող լուծույթը պատրաստեք ամեն օր կամ ըստ անհրաժեշտության: Կարելի
---	---

Մաքրման ընդհանուր ցուցումներ խմբային միջավայրերում շնչառական հիվանդությունների դեպքում

	<p>Է օգտագործել թեստային ժապավեններ՝ ստուգելու, թե արդյոք լուծույթը ճիշտ բաղադրության է:</p> <ul style="list-style-type: none"> • Խորհուրդ է տրվում օգտագործել 70% սպիրտային հիմքով ախտահանող միջոցներ՝ կանխելու վիրուսների տարածումը, սակայն սպիրտը կարող է արագ գոլորշիանալ և լիարժեք ախտահանում չապահովել: Եթե օգտագործում եք այդ ապրանքները, ապա պահպանեք ցուցումներում նշված կոնտակտային ժամանակը:
	<p>Գորգեր, բազմոցներ և այլ ծակոտկեն (ներծծող) մակերեսներ՝</p> <ul style="list-style-type: none"> • Փոշեծծիչով մաքրեք՝ կանխելու համար փոշու տարածումն ու օդի մեջ տարածվելը: • Անմիջապես մաքուր մաքրեք մարմնի հեղուկների հետքերը՝ հետևելով կանոններին ու ընթացակարգերին: • Խորությամբ մաքրեք գորգերը՝ հնարավորինս խուսափելով կաթիլների տարածումից: • Գորգերը և ծակոտկեն մակերեսները մաքրելու համար անհրաժեշտության դեպքում օգտագործեք գոլորշիով մաքրող միջոցներ:
	<p>Սպիտակեղեն՝</p> <ul style="list-style-type: none"> • Սավանները, վերմակները, սրբիչները, վարագույրները և այլ սպիտակեղենը լվացեք լվացքի կենցաղային օճառով և տաք ջրով (167 °F և ավելի բարձր): Չորացրեք բարձր ջերմության տակ՝ ըստ կանոնների և ընթացակարգերի:
	<p>Մպասք և գործիքներ՝</p> <ul style="list-style-type: none"> • Մաքրեք և մանրեագրե՛ք ափսեները, բաժակները և արծաթ սպասքը ափսեներ լվացող մեքենայի մեջ կամ ձեռքով լվացեք՝ օգտագործելով օճառ, տաք ջուր և ՇՄԳ-ի կողմից հաստատված ախտահանիչ միջոց: • Շվաբրը և կտորները լվացեք օճառով ու տաք ջրով և մանրեագրե՛ք ՇՄԳ-ի կողմից գրանցված ախտահանիչով կամ սպիտակեցնող լուծույթով և թողեք չորանալ: Օգտագործեք շվաբրի մեկանգամյա օգտագործման գլխիկներ և/կամ կտորներ՝ որպես այլընտրանք: • Էլեկտրոնիկայի համար կամ ախտահանող անձեռոցիկներ օգտագործելիս ուշադիր կարդացեք ցուցումները: Ստուգեք՝ արդյոք Էլեկտրոնիկան կարող է դիմակայել այդպիսի անձեռոցիկների բազմակի օգտագործմանը, որոնք

Մաքրման ընդհանուր ցուցումներ խմբային միջավայրերում շնչառական հիվանդությունների դեպքում

	<p>անհրաժեշտ են մակերեսը բավականաչափ երկար ժամանակով խոնավ պահելու համար՝ համապատասխանելով պահանջվող կոնտակտային ժամանակին:</p>
	<p>Թափոնների հեռացում</p> <ul style="list-style-type: none"> • Աղբի կամ թափոնների հետ գործ ունենալիս կրեք ձեռնոցներ: • Համոզվեք, որ աղբը նետում եք ամուր չարտահոսող (օրինակ՝ պլաստիկե) տոպրակների մեջ, որոնք ամուր կապվում են, անմիջապես տեղադրվում են աղբարկղերի մեջ և պարբերաբար հեռացվում են: • Բժշկական թափոնների հետ վարվեք ըստ կանոնների և ընթացակարգերի: • Թափոնները մաքրելուց և դեն նետելուց հետո հանեք ձեռնոցները և լվացեք ձեռքերը:
	<p>Մաքրման հետ կապված այլ ընդհանուր ցուցումներ</p> <ul style="list-style-type: none"> • Անմիջապես դեն նետեք մեկանգամյա օգտագործման բոլոր մաքրող միջոցները: • Հաճախակի լվացեք ձեռքերը, ներառյալ՝ աղբի զամբյուղները դատարկելուց և անձեռոցիկների ու նմանատիպ աղբի դիպչելուց հետո: • Մանրակրկիտ ու հաճախակի լվացեք ձեռքերը օճառով ու ջրով առնվազն 20 վայրկյան կամ օգտագործեք սպիրտային հիմքով ձեռքերի մաքրման միջոց, որը պարունակում է առնվազն 60% սպիրտ: Տե՛ս Հանրային առողջապահության վարչության ցուցումները՝ կապված ձեռքերը ճիշտ լվանալու հետ: http://publichealth.lacounty.gov/acd/handwash.htm